



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 26 » « *օգոստոս* » 2019 թ. № 442-ՂԻ

**ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**  
**ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 26-րդ կետի 11-րդ ենթակետը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝**

1. Նշանակել ծառայողական քննություն քարտուղարության պետ Ն. Ալավերդյանի 2019 թվականի օգոստոսի 20-ի զեկուցագրով (մտ. 71400) նախարարության քարտուղարության արձանագրային և արխիվացման բաժնի առաջատար մասնագետ Մարիամ Սարգսյանի կողմից ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու դեպքով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) 2019 թվականի հուլիս ամսվա 11 և օգոստոս ամսվա 4 օրերի ընթացքում ծառայողական պարտականությունները ոչ պատշաճ կատարելու պատճառները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

- 1) Աշոտ Ավայան - Գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,
- 2) Արմինե Հովհաննիսյան - Իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի պետ,
- 3) Մերի Բաբայան - Անձնակազմի կառավարման բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանն ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Վ. ԶԻԼԱՎՅԱՆ

« 26 » « *օգոստոս* » 2019 թ.  
 ք. Երևան